


Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ



Հաւանական չէ որ Յաթիմեանց շրջանին, և աւելի ետքն ալ, Հայերը կարեւոր բնակչութիւն և դիրք ունեցած ըլլան Ստորին Եգիպտոսի, և մասնաւորապէս Աղեքսանդրիոյ մէջ, ուր յունական ազդեցութիւնը տիրական էր չստ:

Ղպտինները, որոնք զաւանաբանական պատճառներով չատ կը խորշէին Յոյներէն, Գահիրէի կառուցուելէն վերջը մասնաւանդ, այսինքն արաբական տիրապետութենէն ետքը, սկսան անելի կեդրոնանալ Գահիրէի մէջ և Վերին Եգիպտոս, ուր սակաւաթիւ էին Յոյները: Կարելի է մտածել որ Հայերն ալ, նոյն և նման պատճառներով, աւելի Ղպտիններուն մօտ տպւած լինին անոնց բնակած գաւառներուն մէջ:

Ամէն պարագայի մէջ, Աղեքսանդրիաբնակ Հայութեան որեւէ յիշատակ չ'ունինք պատմութեան մէջ, մինչեւ Մէհմէտ Ալիի շրջանը:

Այդ միջոցին, շուրջ 1825-40, երբ նորեկներ կ'սկսին հեռագհատէ հաստատուիլ հոն, կ'ստացուի Ապու Տարտարի ազգապատկան ընդարձակ գետինը, մասամբ Պօղոս Պէյ Եռսուֆի (*).

(*) Ուրիշ աւանդութեան մը համեմատ, զոր Հ. Ս. Էփրէկեան կ'յիշե Գեղունի-ի մէջ (էջ 24), «Երբ Պօղոս Պէյ 1844-ին մեռաւ եւ քաղուեցաւ Էկեղեցոյ տեղ ծառայող շենքին մօտ,